

Հաշվետվություն

Հ.Հ. Գեղարքունիքի մարզի Գեղաքար համայնքի ղեկավար Ա.Խաչատրյանի 2011թ. կատարած աշխատանքների մասին:

Հարգելի համագյուղացիներ, հյուրեր և ավագանու անդամներ Ձեզ եմ ներկայացնում 2011թ. իմ կողմից Գեղաքար համայնքում կատարված աշխատանքների և բյուջեի կատարողականի մասին:

Գեղաքար համայնքում 42 տնտեսություն և ապրում է 167 բնակիչ, որից շուրջ 50%-ը փախստականներ են:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> և Հ.Հ. <<Համայնքային ծառայության մասին>> օրենքներով համայնքի ՏԻՄ մարմինները իրենց գործունեությունը հիմնականում նպատակաուղղվել է համայնքի բնակչության հոգսերի և խնդիրների լուծմանը համայնքում առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների բարելավման հարցերին:

Այդ ընթացքում համայնքում իրականացվել է մի շարք ծրագրեր:

2011թ. Ասիական բանկի միջոցներով ասֆալտապատվել են Գեղաքարի միջհամայնքային ճանապարհները:

Գյուղապետարանի միջոցներով հարթեցվել և բարեկարգվել են գյուղամիջյան ճանապարհները:

Կատարվել է խմելու ջրի ներքին և արտաքին ցանցերի խողովակաշարերի վերականգնում:

Համայնքի ազգաբնակչության միջոցներով մաքրվել է ոռոգման ցանցի ջրատարը, միժամանակ իրազեկված է, որ չնայած կատարված աշխատանքների համայնքում դեռևս առկա է մի շարք հիմնախնդիրներ կապված ոռոգման ցանցի և խմելու համակարգերի կառուցման հետ, որի հնարավորությունը գյուղապետարանը այդ չունի խնդիրների լուծումը ընդգրկված է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրերում և ներկայացվել է վերոհաս մարմիններին: Համայնքում գործում է 1 հիմնական դպրոց չկա մանկապարտեզ և կուլտուրայի տուն:

2011թ. ընթացքում համայնքի բնակիչների կողմից ստացվել 25 դիմում տարբեր բնույթի, որից տրվել է դրամական օգնություն 7 առավել անապահով ընտանիքների մնացած դիմումները կրել են հողամասերի չափերի ճշտգրման, շինանյութի, օգնության և հողամասերի վարձակալման որոնք ստացել են համապատասխան ընթացք:

2011թ. ընթացքում կայացվել է ավագանու 7 նիստ:

Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուտնտեսությամբ և անասնապահությամբ:

Գեղաքարի գյուղապետարանի աշխատակազմը բաղկացած է 5 հոգուց, իսկ համայնքի ավագանին բաղկացած է 5 անդամից:

Համայնքի վարչական տարածքն 1182,2 հա է, որից վարելահող 476,3 հա սեփականաշնորհվել է 68 հա, խոտհարք 18,07 հա, արոտ 619,3 հա, տնամերձ 13,7 հա:

2011թ. համայնքի բյուջեն կազմում է 7046,5 հազար, որը կատարվել է 88.79%-ով: Բյուջեն ըստ եկամուտային մասի հետևյալն է՝

Հ/հ	Եկամուտների անվանումը	Նախատեսված	Փաստացի կատարված	Կատարման %-ը
1	Հողի հարկ	613,9	588,0	95.91
2	Գույքհարկ	9,7	93,9	-
3	Հողի վարձավճար	2028,9	1802,0	88.87
4	Գույքի վարձակալում	300,0	313,5	100

Բյուջեի ծախսերը ըստ հոդվածների

1. Աշխատավարձ 4080.0 հազար դրամ
2. Սոց հատկացում 868,0 հազար դրամ
3. Օգնություն քաղաքացիներին 400,0 հազար դրամ

Համայնքի ղեկավար՝

Ա. Խաչատրյան